համար պիտի անեն, իր մահից հետո՝ ինձ համար: Ով խափանի, թող դատվի Տիրոջ կողմից:

Տաճարում հարավային որմին

Անմահ Աստծու կամքով մենք՝ Մխիթար և Պետրոս քահանաներս, համաձայնվեցինք Սուրբ ուխտի հետ և տվինք կորնկանի մեր բաժինը և այլ արդյունքներ այս եկեղեցու շինության համար, իսկ սրանք հաստատեցին երեք օր ժամ (պատարագ) երկուսը մեզ համար, մեկը Հովհաննես Սարկավագի կենդանության համար Դավթի ու Հակոբի տոներին, ով չանի, Քրիստոսից նզովվի:

Տապանատան հարավային որմին

Ես՝ Երկաթի որդի Աշոտս, անժամանակ ելա աշխարհից, իմ այգին տվի Սուրբ Կարապետին, իսկ սրանք խոստացան տարեկան չորս պատարագ (Սուրբ Կյուրեղի տոնին)՝ երկուսը ինձ, մեկը իմ հոր, մեկը մորս: Իսկ ես՝ Աշոտի մայր Ռուզաքանս, իմ կալվածքների ինչքը տվի Սուրբ Կարապետին իմ մահից հետո: Կատարողները թող օրհնվեն Աստծուց:

Տաճարից դուրս հարավային կողմը

Քրիստոսի շնորհներով ես՝ Մնդարի որդի Արենու երեց Աղայդոնս, համաձայնվեցի Սուրբ ուխտի հետ, գնեցի Խարաբելանց այգին և տվի սրբերին, իսկ սրա սպասավորները տարին չորս ժամ (պատարագ) սահմանեցին Կյուրեղի տոնին: Ով չանի, նզովվի Քրիստոսից:

Օշականի եկեղեցու հյուսիսակողմում

Յոթ հարյուր երեսունյոթ (1288) թվին տեր Համազասպի առաջնորդության Սահմանդինի և իր որդիներ Ամիրբեկի ու Հազարբեկի պարոնության ժամանակ ես՝ Գելմարդս, ամիրա էի, իսկ Հավիկը իշխանավոր, թողինք Սուրբ Կարապետի այգիների Օշականի ամիրի ու իշխանավորի հարկը, ինչ որ կար մեր հոգու փրկության համար և արևշատություն պարոնների: Արդ նա, որ ժամանակներ հետո մեր ընծաները խափանել ջանա, երբ հարյուր տասնութ հայրապետներից նզովված է և Հուդայի վարկը թող առնի, օրհնյալ

հող թող նրան չծածկի: Գրության կատարողները թող օրհնվեն Աստծուց, ամեն:

Անգիր հիշատակարաններ

Ինչ որ եկեղեցիների պատերի վրա արձանագրությունների մեջ կամ գրքերի հիշատակարաններում գտանք, դրանք այստեղ գրեցինք: Այժմ կգրենք նրանք, որոնք որևէ տեղում գրված չեն և նրանց անունները կհայտնեմ, թե այսինչ գյուղը, այսինչ անունով այգին կամ պարտեզը, կամ հողը այսքան օր: Իսկ նրանք, որ գրված են արձանագրությունների մեջ, դրանք ևս կնշանակեմ, որ կրկին վկա լինի:

Նախ Կարբիում տեր Մխիթարի այգին, տեր Ղազարի այգին, Տանձուտ այգին, տեր Հուսիկի պարտեզը, Ծովի խոտհարքը, Կոնթեղուտ հողը երեք օր (պատարագ), Նաղարաչին մեկ օր, Ծովը երկու օր, Գիլեպատը (Գիլապատ նշանակում է գլահողով պատված կամ խճաքարերով պատված) մեկ օր, Հովիտի պարոնենց հողը երեք օր:

Օհանավանքում

Դիլանցոց այգին, Խուտիկենց այգին, Գաֆարի պարտեզը, Թեիենենց պարտեզը, Վանքի տակի դեմը,* գետափի ծանծաղուտը, Մեծ առվույտանոցը՝ չորս օր, Չախմախենց հողը՝ հինգ օր, Փշուտը, որ Ջաֆարենցն է, մեկ օր, Ուռետակը, որ կավանոցն է՝ չորս օր, Խոջենցը՝ երկու օր, Թեիենենց հողը՝ երկու օր, Կնգուղանցը մեկ օր, ղռերը՝ երեք օր և այլ մանրերը Սերկևիլում, Վասակամուտը՝ 7 օր և անապատը այգիով ու թեմերով, Հուշիի Սերմակորուսը երկու օր, Ովսում Քառենց հողը՝ երկու օր, ընկուզենիներով պարտեզը, Փարպիում Թարաղուլու պարտեզը հնձանով ու կալով, մեծ այգին, որ Կարբի գնացող պողոտայի վրա է, Ջանբաբենց հողը մեկ օր, ներքին խոպանը, որ պատկանում է Թորոսենց, երեք օր, մեկ բրնձահան, երկու ջրաղաց Փարպիում, մեկ ձիթհան Կարբիում կալերի մոտ, մեկ ձիթհան, մեկ ջրաղաց Օհանավանքում, մի ձիթհան երկու կալով, երկու դրգատնով (բրուտանոց) և մի ջրաղաց, որ կոչվում է Խրխնջան, Ապարանում Քասաղ գյուղում, վեց ստակ մուլք Որդկա-

* Դէմ-ը պետք է դեմի-ն (անջրդի հող) լինի: